

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ. ՀԱԿԱԳԼՈՒԲԱԼԻԶԱՑԻՈՆ ՇԱՐԺՈ՞ՒՄ, ԹԵ՞...

Մ.Ս. Քոչարյան

Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Յոդվածում ներկայացվում է Իրանի իսլամական հեղափոխությունը և փորձ է արվում կողմնորոշվել այն հակազրոբալիզացիոն շարժում որակելու հարցում: Գեղափոխությունը տապալեց միապետությունը և հաստատեց իսլամական հանրապետությունը: Մինչ այդ մեծացվում էր Արևմուտքի ազդեցությունը Իրանում, որն էլ պատճառ դարձավ, որ ազգայնական ուժերը գլուխ բարձրացնեն և վերականգնեն իսլամական գաղափարների կարևորությունը:

Բանալի բառեր. ԻԻՅ, Իսլամական հեղափոխություն, զրոբալիզացիա, հակազրոբալիզացիա, արևմտականացում:

Ինչպես բոլոր հեղափոխությունները, այնպես էլ Իրանի իսլամական հեղափոխությունը մեկ օրում տեղի չի ունեցել: Բուն հեղափոխական շարժումը սկսվել է 1977թ. և հասել հանգուցալուծմանը 1979թ. փետրվարի 11-ին, սակայն դրա ձևավորումը նշարվում է դեռևս 1960-ականներին: Այն համարվում է ,ամենաժողովրդական հեղափոխությունը ժամանակակից աշխարհում, քանի որ դրան մասնակցել է Իրանի բնակչության 11%, ի տարբերություն Ֆրանսիական և Ռուսական հեղափոխությունների, որոնց մասնակցել է բնակչության համապատասխանաբար 7% և 9%¹:

Իրանի իսլամական հեղափոխությունը շրջադարձային իրադարձություն էր Մերձավոր Արևելքում և դրա բուն էությունը հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ պատմական նախադրյալներին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում վերաբաշխվեցին դերերը, գերտերությունների դերերը ստացան ԱՄՆ (Ամերիկային Սիացյալ Նահանգներ) և ԽՍՀՄ (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն) և սկսվեց Սառը պատերազմը: Նրանցից յուրաքանչյուրը նպատակ ուներ հնարավորինս շատ երկրներ պահել ազդեցության տակ: Իրանի

¹ Milani A., *The Three Paradoxes of the Islamic Revolution in Iran, The Iranian Revolution at 30, The Middle East Institute Washington, 2009, pp. 26-19.*

այդժմյան ղեկավար Փահլավին և նրա որդին որդեգրել էին արևմտամետ քաղաքականություն, որով մեծացվում էր Արևմուտքի ազդեցությունը Իրանում: Դրա վառ ապացույց էր 1960-ականներին Շահի կողմից ընդունված «Սպիտակ հեղափոխություն» կոչվող արդիականացման ծրագիրը²: Այս ծրագիրը քայլ էր ամրապնդելու Շահի քաղաքական ազդեցությունը և ապահովելու ԱՄՆ շարունակական աջակցությունը: Ծրագիրը հիմնականում ներառում էր հարուստ հողատերերի հողերի բաշխում հող չունեցող գյուղացիներին, հակակոռուպցիոն արշավներ, պետության գործառույթների ապակենտրոնացում, պետական որոշ գործարանների մասնավորեցում, կանանց ձայնի իրավունքի շնորհում: Ծրագրին դեմ արտահայտվեցին և շահին մեղադրեցին շիա հոգևորականները և մոլլաները, որովհետև նրանց կարծիքով այդ ծրագրով Իրանի իսլամական ինքնությունը ստորադասվում է արևմտյան առաջադիմական գաղափարների նկատմամբ: Հատկապես Ռուհոլլահ Մուսավի խոմեյնին որակեց այդ քայլը որպես արևմտյան իմպերիալիզմի դրսևորման և իրանական ինքնության կործանման օրինակ: Նա և մի խումբ շիա հոգևորականներ մշակեցին տեսություն, որով իսլամը պետք է դառնար Իրանի կառավարման հիմք³: Դա արվեց մշակութային և ազգային ինքնությունը պահպանելու համար և կարելի է ասել դարձավ Իրանի իսլամական հեղափոխության առաջացման նախադրյալներից հիմնականը:

Սառը պատերազմի տարիներին Մերձավոր Արևելքում առկա էր մի այսպիսի խնդիր, որ երբ տարածաշրջանի երկրները չէին ստանում ԱՄՆ աջակցությունը, սկսում էին նույն խաղը ԽՍՀՄ-ի հետ: Երկու գերտերություններն էլ գունար և աջակցություն էին տրամադրում տարածաշրջանին՝ Սառը պատերազմի մրցակցության համատեքստում, մինչդեռ տարածաշրջանային առաջնորդները օգտագործում էին ստացած օգնությունն ու աջակցությունը սեփական շահերի իրագործման համար: Իրանի դեպքում Շահը օգտագործում էր գերտերությունների միջև առկա մրցակցությունը իր ռեժիմը ուժեղացնելու համար: Արտաքին աջակցություն ստանալու փորձերով տարված Շահին չի հաջողվում դիմակայել Իրանի ներ-

² Firouzbakch, H., *A Structural-Demographic Approach To Revolution : The Case Of The Iranian Revolution Of 1979*, Civilisations, 1988, Vol. 38, № 2, pp. 85-104.

³ Summitt A., *For a White Revolution: John F. Kennedy and the Shah of Iran*, Middle East Journal, 2004, Vol. 58, № 4, pp. 560-575.

սում աճող իսլամական շարժմանը⁴:

Չնայած նրան, որ Շահի օրոք Իրանում գրանցվել էր տնտեսական և սոցիալական աճ, նրա ռեպրեսիվ մեթոդները և Արևմուտքի հետ սերտ հարաբերությունները իր դեմ հանեցին բնակչության մեծ մասին: 1978թ. ներքին անկարգությունները վերածվեցին մասշտաբային կրոնական և քաղաքական ընդդիմության՝ ներառելով ազգայնականներին, իսլամիստներին, մարքսիստներին և ուսանողական խմբերի⁵: Այսինքն իսլամիզմից զատ այս հեղափոխության մեջ առկա էին այնպիսի տարբեր գաղափարախոսական տարրեր, ինչպիսիք են՝ սոցիալիզմը, լիբերալիզմը և ազգայնականությունը: Այս հեղափոխությունը հատկանշական է նրանով, որ դրա շարժիչ ուժը Իրանի ներսում առկա դասակարգերի և կրոնական խմբերի մեծ դաշինքն էր: Նրանք դժգոհ էին քաղաքական գործընթացներին մասնակցելու սահմանափակությունից, Իրանի արևմտամետ դառնալու գաղափարից և նրանից, որ Իրանի նավթի հսկայական պաշարներից ստացված եկամուտը կենտրոնացված է կոնկրետ մարդկանց ձեռքին⁶:

Այսինքն Իրանի իսլամական հեղափոխությունը պայքար էր նյութապաշտության և կոռուպցիայի դեմ, իրանցիների դիմադրությունն էր արդիականացմանը և արևմտականացմանը, ինչպես նաև ինքնաբուխ պայքար էր միապետության և բացարձակ իշխանության դեմ⁷ :

Իրանի իսլամական հեղափոխության վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ, որոնք խմբավորելու դեպքում կստանանք հետևյալ պատկերը և կունենանք հետևյալ հիմնական մոտեցումները⁸:

Լիբերալ մոտեցում- Այս մոտեցման համաձայն ԱՄՆ նախագահ Քարթերի պարտադրած մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականությամբ ճնշումներ էին գործադրվում Շահի ռեժիմի նկատմամբ: Այդ ճնշումների նպատակն էր Շահին ստիպել կիրառել ավելի լիբերալ և մեղմ միջոցներ: Շահը հնազանդվում և փոխում է որոշ բռնապետական միջոցներ,

⁴ Նույն տեղում

⁵ Patterson E., *Iran: Religious Elements of the 1979 Islamic Revolution*, Berkley Center for Religion, Peace, and World Affairs, 2013, p. 6.

⁶ Muhammad A., *The Iranian Revolution: The Role and Contribution of Ayatollah Ruhollah Khomeini*, Afghan Journalists Committee, 2012, pp. 3-25.

⁷ Elwell-Sutton L., *The Iranian Revolution*, *International Journal*, 1979, Vol. 34, № 3, pp. 391-407

⁸ Mousavi S., *Islamic Revolution of Iran: A Philosophical Analysis*, *Pakistan Horizon*, 2009, Vol. 62, № 2/3, pp. 13-17.

որն էլ հանգեցնում է Իսլամական հեղափոխության:

Մարքսիստական մոտեցում-Որոշ մարքսիստ հեղինակներ մեկնաբանում են Իսլամական հեղափոխությունը որպես տարբեր դասակարգերի բախում: Այսինքն, այն բախում էր բուրժուազիայի և միջին դասի միջև, որի արդյունքում էլ միջին դասը եկավ իշխանության:

Ազգայնական մոտեցում- Այս մոտեցման համաձայն Իրանի իսլամական հեղափոխությունը իրանցիների պայքարն էր հանուն ազատության, բռնապետության ճնշման և ռեժիմի տապալման:

Սոցիալ-տնտեսական մոտեցում- Սա մոտ է մարքսիստական մոտեցմանը, բայց լիբերալ-մարքսիստական տեսանկյունից: Սրա համաձայն Իրանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները հանգեցրին Չեղափոխության:

Արմատական մոտեցում- Այս մոտեցման համաձայն, Չեղափոխությունը տեղի ունեցավ արտաքին ճնշումների պատճառով:

Իհարկե կան տարբեր մոտեցումներ, սակայն հստակ նպատակները հասկանալու համար կարելի է պարզապես վերլուծել Չեղափոխության ընթացքում օգտագործված լոզունգները: Դրանցից հիմնականն ասում էր՝ «Ազատություն, անկախություն, Իսլամական Հանրապետություն»⁹: Այս կարգախոսի միջոցով իրանցիները հայտնում էին իրենց դժգոհությունը Արևմուտքից կախյալ վիճակի նկատմամբ և պահանջում էին այնպիսի ռեժիմ, որը անկախ կլինի ԱՄՆ-ից: Նրանք նաև ազատություն էին պահանջում և ընդդիմանում էին Շահի ավտոկրատ և ռեպրեսիվ գործելաոճին: Եվ ի վերջո նրանք համոզված էին, որ իսլամը ունակ է հաստատելու ավելի մարդասիրական և ժողովրդավար քաղաքական համակարգ: Իսլամի գաղափարը հատկապես շեշտադրված է մյուս երկու լոզունգներում, որոնք ասում են՝ «Ալլահն ամենազոր է և Խոմեյնին է առաջնորդը» , «Մենք Ղուրանի հետևորդներն ենք և չենք ուզում Շահին»¹⁰: Լոզունգներից պարզ է դառնում, որ իրանցիները դուրս էին եկել փողոց և պահանջում էին որ իրենց երկրում քաղաքականությունը իրականացվի իսլամի գաղափարների հիման վրա:

Սառը պատերազմի տարիներին առկա էր միջազգային գործընթացների վերահսկման բարձր մակարդակ, որտեղ երկբևեռ աշխարհը ձևավորվում էր

⁹ Etefaghfar F., *The Revolution's Mixed Balance Sheet, The Iranian Revolution at 30, The Middle East Institute Washington, 2009, pp. 39-41.*

¹⁰ Mousavi S., *Տես նշված աշխատության, pp. 13-17.*

երկու գերտերությունների համաձայնությամբ: Հարկ է նշել, որ Իսլամական հեղափոխության առաջնորդ Խոմեյնիին արտահայտում էր իր վրդովմունքը ներքին ճնշումների և աշխարհում տիրող գլոբալ համակարգի հանդեպ ժխտելով կոմունիզմը (Արևելք) և իմպերիալիզմը (Արևմուտք): Դրա վառ արտահայտությունն էր Հեղափոխության օրերին հնչող «Ո՛չ Արևելք, ո՛չ Արևմուտք, Իսլամական Հանրապետություն» լոզունգը: Վերոնշյալ փաստը ցույց է տալիս, որ Իրանում գերտերությունների միջամտության բացառումը և անկախության, ազգային ու իսլամական ինքնության պահպանման վրա շեշտադրումը Իսլամական հեղափոխության ամենահզոր շարժիչ ուժն էին¹¹:

Ամփոփելով կարող ենք առանձնացնել Իրանի իսլամական հեղափոխության հետևյալ նպատակները.

- Իսլամի գերակայության հաստատում իրանցիների կյանքի բոլոր ոլորտներում,
- բռնապետության տապալում,
- ինքնիշխանության վերականգնում և արտաքին ցանկացած ճնշման ու միջամտության վերացում,
- կոռուպցիայի վերացում,
- արևմտականացման և արդիականացման բացառում:

Իրանի իսլամական հեղափոխության մասին շատ թե քիչ պատկերացում ունենալուց հետո հարկ է հասկանալ, թե արդյոք կարելի է այն որակել որպես հակագլոբալիզացիոն շարժում, թե ոչ: Նախքան հակագլոբալիզացիային անցնելը, հստակեցնենք թե ինչ են նշանակում արևմտականացում և արդիականացում հասկացությունները, որովհետև ինչպես արդեն նշվել է այդ հասկացություններին ընդդիմանալը Իրանի իսլամական հեղափոխության նախադրյալներից մեկն էր:

Արդիականացումը գլոբալ գործընթաց է, որը առկա է աշխարհի բոլոր խոշոր քաղաքներում՝ անկախ ազգային մշակույթից: Ըստ Հանթինգթոնի, արդիականացումը ներառում է արդյունաբերականացում, քաղաքաշինություն, սոցիալական, կրթական մակարդակի բարձրացում, գրագիտության աճ ¹²: Բայց արդիականացման համար անհրաժեշտ է հա-

¹¹ Shakeri M., *Islamic Revolution of Iran: Consequences and Achievements*. Pakistan Horizon, 2009, Vol. 62, № 2/3, pp. 7-12.

¹² Huntington S., *The Clash of Civilizations and the Remaking of World Order*, Simon & Schuster, 1996, p.68.

յացք նետել արևմտականացմանը, որը 18-րդ դարասկզբին լայնորեն ընդարձակեց գիտական և ինժեներական գիտելիքները, և մարդկանց հնարավորություն տվեց վերահսկել ու ձևավորել իրենց միջավայրը նոր ձևերով: Իսլամադավան բնակչություն ունեցող երկրներում կան ավտոմեքենաներ, երկնաքերեր, հեռուստատեսություն, երիտասարդները կրում են ժամանակակից ջիներ և լսում են արևմտյան երաժշտություն: Այս ամենը արդիական է, բայց ոչ արևմտական:

Արևմտականացումը արժեքների և փորձի ամբողջությունն է, որը ձևավորվել է Արևմուտքում անտիկ շրջանից ի վեր: Այս արժեքները և փորձը մեկ օրվա ընթացքում չեն կարող վերարտադրվել: Կարելի է ասել՝ արդիականացումը սկիզբ է առել արևմտականացումից և երկիրը կարող է լինել արդիականացված առանց արևմտականացվելու¹³: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Իրանի դեպքում ունեինք ոչ արաբական, իսլամադավան, արդիականացված հասարակություն, որին իշխում էր արևմտականացման ձգտող բռնապետ: Սակայն արևմտականցումն ու արդիականացումը երբեմն ընկալվում են որպես հոմանիշներ և ստեղծում տպավորություն, թե իրանցիները պայքարում էին արդիականացման դեմ ևս:

Գլոբալիզացիան այն հասկացություններից է, որը գիտական շրջանակներում դարձել է քննարկումների ու բանավեճերի առարկա և այդպես էլ վերջնական ու մեկ ամբողջական սահմանում չի ստացել: Ըստ տարածված կարծիքներից մեկի, **գլոբալիզացիան** արևմտականացման տարածումն է աշխարհով մեկ ¹⁴: Արևմտականացումը, որպես հասկացություն գլոբալիզացիայի համարժեքը չէ, չնայած նրան որ այն կարելի է դիտարկել որպես գլոբալիզացիայի բաղադրիչ մաս: Ինստիտուցիոնալ որոշ հատկանիշներ և մշակութային առանձնահատկություններ, որոնք ծագել են Արևմուտքում, տարածվել են աշխարհով մեկ գաղութատիրական շրջանից ի վեր: Ժամանակի ընթացքում այդ հատկանիշներն ու առանձնահատկությունները սերտաճել են տեղական ու ազգային արժեքների հետ ու նոր իմաստ ստացել: Հետևաբար, արևմտականացումը ոչ միայն գլոբալիզացիայի բաղադրիչ մասն է, այլև գլոբալացման գործընթացի սկզբնական փուլն է: Գլոբալիզացիան, այսինքն

¹³ Farhat-Holzman L., *Modernization or Westernization: the Muslim World vs. The Rest, Comparative Civilizations Review*, 2012, Vol. 67, № 67, pp. 50-62.

¹⁴ Khondker H., *Glocalization as Globalization: Evolution of a Sociological Concept, Bangladesh e-Journal of Sociology*, 2004, Vol. 1, № 2, pp. 12-20.

արևմտականացման ու ժողովրդավարական արժեքների տարածումն աշխարհով մեկ, դարձավ ավելի լայնամասշտաբ միայն ԽՍՀՄ փլուզումից հետո: Ի հակադրում գլոբալիզացիայի առաջացավ հակագլոբալիզացիան: Կարևոր է առանձնացնել, որ հակագլոբալիզացիայի ջատագովները պայքարում են ներկա աշխարհակարգին այլընտրանքային աշխարհակարգ ունենալու համար¹⁵:

Իրանի իսլամական հեղափոխությունը տեղի ունեցավ Սառը պատերազմի տարիներին, երբ պետք էր ընտրել կա՛մ Արևելք, կա՛մ Արևմուտք: Դա էր ժամանակի աշխարհակարգը, սակայն Խոմեյնին իր գաղափարակիցների հետ փորձեց թելադրել նոր պայմաններ և պաշտպանել Իրանի ինքնիշխանությունը: Այդ ժամանակ գլոբալիզացիան և հակագլոբալիզացիան ներկայիս ընկալմամբ դեռևս գոյություն չունեին, ուստի Իրանի իսլամական հեղափոխության դեպքում հակագլոբալիզացիոն շարժման մասին խոսել չենք կարող: Այն իր մեջ պարզապես պարունակում էր հակագլոբալիզացոն տարր, այն է հակաարևմտականացում, և հակադրվում էր ներկա աշխարհակարգի երկբևեռությանը՝ դեմ լինելով և՛ արևմտյան արժեքներին, և՛ կոմունիզմին: Ամբողջացնելով վերոնշյալ բոլոր հասկացություններն ու տրված սահմանումները՝ կարելի է ասել, որ Իրանի իսլամական հեղափոխությունը իր մեջ պարունակում էր հակագլոբալիզացիոն տարր (հակաարևմտականացում), սակայն միանգամայն սխալ կլինի այն որակել որպես հակագլոբալիզացիոն շարժում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Elwell-Sutton L., The Iranian Revolution, *International Journal*, 1979, Vol. 34, № 3, pp. 391-407.
2. Etefaghfar F., The Revolution's Mixed Balance Sheet, *The Iranian Revolution at 30*, The Middle East Institute, Washington, 2009, pp. 39-41.
3. Farhat-Holzman L., Modernization or Westernization: the Muslim World vs. The Rest, *Comparative Civilizations Review*, 2012, Vol. 67, № 67, pp. 50-62.
4. Firouzbakch, H., A Structural-Demographic Approach To Revolution : The Case Of The Iranian Revolution Of 1979, *Civilisations*, 1988, Vol. 38, № 2, pp. 85-104.
5. Huntington S., *The Clash of Civilizations and the Remaking of World Order*, Simon & Schuster, 1996, 368 p.

¹⁵ Warner A., *A Brief History Of The Anti-Globalization Movement*, *The International and Comparative Law Review*, 2005, Vol. 12, № 2, pp. 237-268.

6. Khondker H., Glocalization as Globalization: Evolution of a Sociological Concept, *Bangladesh e-Journal of Sociology*, 2004, Vol.1, № 2, pp. 12-20.
7. Milani A., The Three Paradoxes of the Islamic Revolution in Iran, The Iranian Revolution at 30, The Middle East Institute, Washington, 2009, pp. 26-29.
8. Mousavi S., Islamic Revolution of Iran: A Philosophical Analysis, *Pakistan Horizon*, 2009, Vol. 62, № 2/3, pp. 13-17.
9. Muhammad A., The Iranian Revolution: The Role and Contribution of Ayatollah Ruhollah Khomeini, *Afghan Journalists Committee*, 2012, pp. 3-25.
10. Patterson E., Iran: Religious Elements of the 1979 Islamic Revolution, Berkley Center for Religion, Peace, and World Affairs, 2013, 19 p.
11. Shakeri M., Islamic Revolution of Iran: Consequences and Achievements. *Pakistan Horizon*, 2009, Vol. 62, № 2/3, pp. 7-12
12. Summitt A., For a White Revolution: John F. Kennedy and the Shah of Iran, *Middle East Journal*, 2004, Vol. 58, № 4, pp. 560-575.
13. Warner A., A Brief History Of The Anti-Globalization Movement, *The International and Comparative Law Review*, 2005, Vol. 12, № 2, pp. 237-268.

ISLAMIC REPUBLIC OF IRAN: ANTI-GLOBALIZATION MOVEMENT OR ...?

M.S. Qocharyan

SUMMARY

The article analyses the Islamic Revolution of Iran and attempts to characterize it as an anti-globalization movement. The revolution overthrew the monarchy and established the Islamic Republic. Before that, the influence of the West was growing in Iran, which led to the rise of nationalist forces and made them restore the significance of Islamic ideas.

Key words: IRI, Islamic Revolution, globalization, anti-globalization, westernization.

ИСЛАМСКАЯ РЕСПУБЛИКА ИРАН: АНТИГЛОБАЛИЗАЦИОННОЕ ДВИЖЕНИЕ ИЛИ...?

M. C. Кочарян

АННОТАЦИЯ

В статье анализируется Исламская революция Ирана и делается попытка охарактеризовать ее как антиглобалистское движение. Революция свергла монархию и основала Исламскую Республику. До этого влияние Запада в Иране росло, что привело к пробуждению националистических сил и заставило их восстановить значительность исламских идей.

Ключевые слова: ИРИ, Исламская революция, глобализация, антиглобализация, вестернизация.